



N (_____)

բ. Երևան

NETX ապրանքանիշը ներկայացնող «ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Նաիրի Պողոսյանի, գործելով ընկերության կանոնադրության համաձայն (այսուհետ Օպերատոր), մի կողմից և

այսուհետև՝ **Բաժանորդ**

մյուս կողմից (այսուհետև՝ Բաժանորդ), (համատեղ՝ Կողմեր)

Հիմք ընդունելով ՀԾԿՀ-ի կողմից Օպերատորին տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության ծառայության մատուցման Լիցենզիան (Լիցենզիա թիվ ԼԿ-1390, տրված 2023թ-ի հոկտեմբերի 25-ին) և

Հիմք ընդունելով «ՋԻԷՆ Սիսթեմս» ՍՊԸ-ի և Օպերատորի միջև ստորագրված 2024թ-ի մարտի 01-ին Գործակալական պայմանագրի պահանջները,

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Օպերատորը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով Բաժանորդին մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունը, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց:

Սույն պայմանագրի շրջանակներում Օպերատորը հանդիսանում է Նաև Գործակալ ՋԻԷՆ Սիսթեմս ՍՊԸ-ի հետ ստորագրված Գործակալական պայմանագրի պահանջներին համապատասխան

1.2. Սույն պայմանագրով Ծառայություն է համարվում էլեկտրոնային հաղորդակցման ցանցի մալուխի միջոցով Բաժանորդի համակարգչային սարքավարմանը կամ համապատասխան բաժանարար սարքի/ռոուտերի (ներառյալ Wi-Fi հաղորդակցման սարքի) միացումը հետևյալ ծառայություններից յուրաքանչյուրն առանձին կամ համատեղ, այսուհետ միասին Ծառայություն՝

- 1) միացումը համացանցին (internet service)՝ տվյալների փոխանակման ցանցին,
- 2) Գործակալական պայմանագրով ՋԻԷՆ Սիսթեմս ՍՊԸ-ի կողմից մատուցվող բազմաձևոր հեռուստաալիքների՝ հեռուստառադիոհեռարձակման / վերահեռարձակման ծառայության սպասարկում (ՀՈՀ-ի կողմից 2022թ-ի սեպտեմբերի 29-ին տրամադրված Լիցենզիա ԿՀ 340),
- 3) տեսահսկման համակարգի միացումը ցանցին,
- 4) առանձնացված կապուղու տրամադրում (data comunication)

1.3. Ծառայությանը տրամադրվում է ըստ Բաժանորդի ընտրված փաթեթի, որոնք ներկայացված են սույն հրապարակային օֆերտայում և/կամ պաշտոնական կայք էջում, և Բաժանորդը հետ ստորագրությամբ հաստատված սույն հրապարակային օֆերտային մաս կազմող Հավելված 1-ով

1.4. Օպերատորի կողմից տրամադրվող ծառայությունները և «ՋԻԷՆ Սիսթեմս» ՍՊԸ-ի, այսուհետ Պրինցիպալի, կողմից մատուցվող ծառայությունները բաշխված են ըստ ի **փաթեթները (այսուհետ Փաթեթ)**՝

Փաթեթի անվանումը	Փաթեթում ընդգրկվող ծառայությունները			Փաթեթի Արժեքը
	IP TV	Cat TV	Ինտերնետ	
X50	-	-	մինչև 50 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	5.500 ՀՀ դր
X150	-	-	մինչև 150 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	7.000 ՀՀ դր
X200	-	-	մինչև 200 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	8.000 ՀՀ դր

Pro50	-	1 հեռուստացույցի միացում / 140+ ալիքի վերահաղորդում	մինչև 50 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	6.500 ՀՀ դր
Pro150	-	2 հեռուստացույցի միացում / 140+ ալիքի վերահաղորդում	մինչև 150 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	8.500 ՀՀ դր
Pro300	-	3 հեռուստացույցի միացում / 140+ ալիքի վերահաղորդում	մինչև 300 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	11.500 ՀՀ դր
ProMax100	1 հեռուստացույցի միացում / 140+ ալիքի վերահաղորդում	1 հեռուստացույցի միացում / 140+ ալիքի վերահաղորդում	մինչև 100 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	8.900 ՀՀ դր
ProMax200	1 հեռուստացույցի միացում / 170+ ալիքի վերահաղորդում	2 հեռուստացույցի միացում / 140+ ալիքի վերահաղորդում	մինչև 200 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	10.900 ՀՀ դր
Exclusive	1 հեռուստացույցի միացում / 200+ ալիքի վերահաղորդում	3 հեռուստացույցի միացում / 140+ ալիքի վերահաղորդում	մինչև 500 մբտ/վրկ հզորությամբ համացանցի (Internet) միացում	14.900 ՀՀ դր
Real IP	Յուրաքանչյուր կետի համար			1.000 ՀՀ դր

1.5. Ծառայություններին կից տրամադրվում են հետևյալ լրացուցիչ ծառայությունները՝ միանվագ կամ ամսական վճարով՝

Լրացուցիչ ծառայություն	Վճարման տարբերակ	Վճարման ենթակա գումար /ՀՀ դրամով/	Քանակ (հատ)
Ստատիկ կապուղի (Real IP)	<input type="checkbox"/> Միանվագ <input type="checkbox"/> Ամսական		
Անհատական կապուղի (data communication)	<input type="checkbox"/> Միանվագ <input type="checkbox"/> Ամսական		

1.6. Ծառայությունը մատուցվում է հետևյալ հասցեով՝ ք.Երևան, _____ հասցեում: Ծառայության տրամադրման հասցեում միացումը կատարվել է բաժանարար թիվ —ից:

1.7. Օպերատորի կողմից տրամադրված բոլոր մալուխները, սարքերը և դետալները հանդիսանում են Օպերատորի սեփականությունը:

1.8. Ծառայությունը մատուցելու համար Օպերատորը Բաժանորդին հանձնում է ստորև նկարագրված սարքավորումները, իսկ Բաժանորդը ընդունում է դրանք, փոխադարձ ստորագրությամբ հանձնման-ընդունման ակտով: Բաժանորդը իր ստորագրությամբ հաստատում սարքավորումները ստանալու և դրանց աշխատող վիճակում լինելու փաստը:

1.9. Սարքավորումները Բաժանորդի կողմից վնասելու կամ Օպերատորին չաշխատող վիճակում հանձնելու դեպքում Բաժանորդը Օպերատորին պարտավոր է վճարել սարքերի գումարն ամբողջությամբ, որը ֆիքսված է ստորև աղյուսակում և հանձնման-ընդունման ակտում՝

Ծախսանյութեր / սարքավորումներ	Սերիան կամ Mac հասցե	Շուկայական արժեք /ՀՀ դրամ/	Քանակ հատ
Թվային օպտիկական սարք	Սերիական համար _____	24,900 դրամ	

IP TV box	Սերիական համար _____	30.900 դրամ	
կառավարման վահանակ	_____	2,900 դրամ	

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Օպերատորը պարտավոր է՝

- 2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,
- 2.1.2. Ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 36 ժամվա ընթացքում վերացնել մատուցված Ծառայության ի հայտ եկած թերություններն ու անսարքությունները,
- 2.1.3. Բաժանորդի կողմից միացման հայտը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել Ծառայության մատուցումը:

2.2. Բաժանորդը պարտավոր է՝

- 2.2.1. Վճարել սույն պայմանագրի 1.4 կետում նշված **Փաթեթին** համապատասխան ամսավճարը, 3.2 կետում նշված պահանջներով,
- 2.2.2. Որևէ կերպ չտրամադրել Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները՝ երրորդ անձի
- 2.2.3. Սարքավորման համար ապահովել էլեկտրական հոսանք՝ սարքավորման վրա նշված էլեկտրական լարման տիրույթում:
- 2.2.4. Օգտվել Օպերատորի ծառայություններից **12 ամսյա ժամկետով**: Բաժանորդը համարվում է նշված պարտավորությունը պատշաճ կատարած, եթե 12 (տասներկու) ամիսների ընթացքում ամբողջությամբ վճարել է 12 (տասներկու) ամիսների ամսավճարները՝ սույն պայմանագրի 1.4 կետի համապատասխան չափով:
- 2.2.5. 12 (տասներկու) ամսյա ժամկետում Օպերատորի ծառայությունից հրաժարվելու դեպքում Օպերատորին վճարել տուժանք՝ **20,000 (քսան հազար) ՀՀ դրամի** չափով:

2.3. Օպերատորն իրավունք ունի՝

- 2.3.1. Կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից:
- 2.3.2. Լրացուցիչ Ծառայությունների կամ հավելյալ աշխատանքների համար Բաժանորդից պահանջել լրացուցիչ վճար՝ ներառյալ փաթեթից դուրս սարքավորումների տեղադրման համար:
- 2.3.3. Միակողմանի կարգով հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Բաժանորդը չի վճարել տվյալ ժամանակաշրջանի /ամսվա/ ամսավճարը:
- 2.3.4. Բաժանորդի տարածքում ցանցային միացումներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար, եթե Օպերատորի կողմից օգտագործված նյութերի քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից սահմանված նորմերը, որն էլ հաստատվել է Բաժանորդի կողմից էլեկտրոնային նամակով կամ փաստաթղթային ստորագրությամբ:
- 2.3.5. Չհաշվարկել սույն պայմանագրով սահմանված Բաժանորդի տույժերի մի մասը:

2.4. Բաժանորդը իրավունք ունի՝

- 2.4.1. Միացման օրվանից **7 (յոթ)** ընթացքում հրաժարվել բաժանորդային Պայմանագրից և հետ ստանալ վճարված ամսավճարը՝ ներկայացնելով վճարման փաստաթղթերը:
- 2.4.2. Ստանալ իրեն մատուցված Ծառայությունների վերձանումները
- 2.4.3. Անվճար կարգով Բաժանորդը կարող է ժամանակավոր դադարեցնել /կասեցնել/ իրեն մատուցվող Ծառայությունները նվազագույնը **10 /տասը/ օրյա**, իսկ առավելագույնը՝ **45 /քառասունհինգ/ օրյա ժամկետով**՝ Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմում /Էլ.փոստ կամ գրավոր/: Ընդ որում Բաժանորդի կողմից դիմումում նշված՝ Ծառայությունների մատուցումը ժամանակավոր դադարեցնելու /կասեցնելու/ ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են, և Օպերատորը պարտավոր չէ Բաժանորդին այդ մասին լրացուցիչ ծանուցելու կամ հիշեցնելու: Կատարված կանխավճարների այն մասը, որի դիմաց Ծառայություն դեռևս ստացված չի եղել, ձևակերպվում են որպես կանխավճար և հաշվանցվում Ծառայությունների վերսկսման ժամանակաշրջանում /ամսում/: Պայմանագրի ժամկետը համարվում է երկարաձգված բաժանորդի կողմից դադարեցված օրերի քանակով:
- 2.4.4. Ծառայությունների մատուցման կասեցման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում վերաակտիվացում և/կամ վերամիացում կարող է կատարվել միայն նոր ժամանակաշրջանի /ամսվա/ կանխավճարի կատարման դեպքում:
- 2.4.5. Բաժանորդն իրավունք ունի փոփոխել Ծառայության սակագնային պլանը նախորդ տեղեկացնելով Օպերատորին՝ գրավոր տարբերակով, որի համար Օպերատորը իրավունք ունի գանձել առանձին վճար: Իսկ Օպերատորը պարտավոր է իրականացնել այդ փոփոխությունը առավելագույնը երեք աշխատանքային օրում և այդուհետ բաժանորդային վճարը հաշվարկել նոր փաթեթի գնով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 3.1.** Սույն Ծառայության վճարը հաշվարկվում է ըստ 1.4 կետում ընտրված **Փաթեթի**, որը ներկայացված է հրապարակային օֆերտայում և/կամ պաշտոնական կայք էջում:
- 3.2.** Պայմանագրով սահմանված ամսավճարը Բաժանորդը վճարում է Օպերատորի կողմից նշված հաշվեհամարին բանկային փոխանցման, վճարահաշվարկային տերմինալների միջոցով կանխավճարային եղանակով:
Վճարման օր համարվում է Օպերատորի հաշվեհամարին հաշվեգրվելու օրը:
Բաժանորդը ծառայությունները ստանում է իր նախորդ վճարած Փաթեթին համապատասխան:
- 3.3.** Կախված աշխարհագրական դիրքից՝ Ծառայության միացման համար Օպերատորը կարող է պահանջել հավելյալ գումար, որի չափը ամրագրված է 1.4 կետում:
- 3.4.** Առանց Օպերատորի կողմից ծանուցման Ծառայությունների մատուցումը կասեցվում է, եթե բաժանորդը չի կատարել տվյալ ամսվա կանխավճարային վճարումը: Կասեցված ժամանակաշրջանում բաժանորդի համար նոր պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ չեն առաջանում:
- 3.5.** Պայմանագիրը կնքվում է **12/տասներկու/ ամիս** ժամկետով: Պայմանագիրը յուրաքանչյուր անգամ համարվում է երկարաձգված **12/տասներկու/ ամիս** ժամկետով, եթե Կողմերից մեկը սույն պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 15/տասնհինգ/ օր առաջ պաշտոնական էլ. փոստին ծանուցմամբ չի հրաժարվում դրանից: Բաժանորդի կողմից **13/տասներեք/-երորդ ամսվա վճարումը** դիտարկվում է որպես պայմանագրի երկարաձգման համաձայնություն:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՍՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1.** Սխալի կամ անսարքության մասին Բաժանորդը պարտավոր է անհապաղ հայտնել Օպերատորին՝ գրավոր կամ հեռախոսազանգի միջոցով: Ուշացման դեպքում Օպերատորը պատասխանատվություն չի կրում հայտնելուն նախորդող ժամանակահատվածի համար:
- 4.2.** Օպերատորը պատասխանատվություն չի կրում մեկ ամսվա ընթացքում 48 ժամ ծառայություն չմատակարարելու համար այն դեպքում, երբ մատակարարումը դադարեցվել է ոչ իր մեղքով: 48 ժամը լրանալուց հետո պարտավոր է վերահաշվարկել յուրաքանչյուր չօգտագործված օրվա համար ծառայությունով:
- 4.3.** Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման հետ կապված միայն այն սխալների և անսարքությունների համար, որոնք գտնվում են իր պատասխանատվության և վերահսկողության ներքո: Օրինակ՝ եթե սխալների և/կամ անսարքության պատճառը Սարքավորումից հետո է կամ Էլեկտրաէներգիայի բացակայությունը, տատանումը և այլ իրադարձություն, որը դուրս է Օպերատորի վերահսկողությունից, Օպերատորը պատասխանատվություն չի կրում:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 5.1.** Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 6.1.** Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 7.1.** Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 7.2.** Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 հավասարազոր օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ: Եթե հայերեն տարբերակից բացի Պայմանագիրը ստորագրված է նաև այլ լեզվով, ապա հայերեն տարբերակը գերակայություն ունի:

7.3. Օպերատորը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել Ծառայությունների մեջ ներառված վերահաղորդվող հեռուստաալիքների ցանկը ու քանակը առանց նախապես ծանուցելու Բաժանորդին, իսկ սակագների փոփոխման դեպքում պարտավորվում է 20 օր առաջ նախորոք տեղեկացնել Բաժանորդին: Նոր սակագնի հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը 15 օրվա ընթացքում տեղեկացնելով կարող է հրաժարվել պայմանագրից: Հակառակ դեպքում Պայմանագիրը շարունակում է գործել կողմերի միջև նոր պայմաններով և նոր սակագնի հիման վրա:

8. **Բաժանորդի ID համար**

--	--	--	--	--	--	--	--

9. **Բաժանորդի կողմից Վճարման եղանակը`**

<p>Telcell կամ EasyPay վճարային տերմինալներով կամ կամ դրամապանակներով փնտրել NETX ապրանքանիշը, մուտքագրել սույն կետով նշված ID համարը և վճարել գումարը</p>

10. **ԿՈՂՄԵՐԻ ՎՎԿԵՐՎՊՎՅՄԱՆՆԵՐ**

ՕՊԵՐԱՏՈՐ
NETX ապրանքանիշ ներկայացնող ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ ՍՊԸ
ՀՎՀՀ 08262279
Հ/Հ ԱՄԵՐԻԿԱԲԱՆԿ ՓԲԸ 1570097335340200
Հասցե` Կարապետ Ուլնեցի 31/3
Հեռախոս (060) 80 77 77 Mail: info@netx.am Վեբ կայք` www.netx.am
Տնօրեն` Նաիրի Պողոսյան
(ստորագրություն/կնիք)

ԲՎԺՎՆՈՐԴ
Անձնագիր սերիա _____ Տրվել է ___/___/_____, _____ կողմից
Ծառայությունը մատուցման հասցե Հասցե _____
Հեռախոս +374 (__) _____
Հեռախոս +374 (__) _____
(ստորագրություն)



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱԸ ՏԱՐԵԿԱԸ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N (01 _____)

ք. Երևան

2024 / ___ / ___ /

NETX ապրանքանիշը ներկայացնող «ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊԸ-ը՝ ի դեմս տնօրեն Նաիրի Պողոսյանի, գործելով ընկերության կանոնադրության համաձայն (այսուհետ Օպերատոր), մի կողմից և

_____ այսուհետև՝ Բաժանորդ մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդ), (համատեղ՝ Կողմեր)

Հիմք ընդունելով Օպերատորի կողմից պաշտոնական կայքում հրապարակված օֆերտան և

Հիմք ընդունելով «ՁԻԷՆ Սիսթեմս» ՍՊԸ-ի, այսուհետ Պրինցիպալ, և Օպերատորի միջև ստորագրված 2024թ-ի մարտի 01-ին Գործակալական պայմանագրի պահանջները,

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել սույն համաձայնագրով նշված Ծառայությունը և սպասարկել Պրինցիպալի կողմից մատուցվող Ծառայությունը, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց:

Օպերատորի և Պրինցիպալի կողմից մատուցվող Ծառայությունը , այսուհետ միասին Ծառայություն Բաժանորդին մատուցվում է Օպերատորի սեփականություն հանդիսացող Էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով

2. Հիմնական Ծառայությունը ներառում է՝ Օպերատորի կողմից հրապարակային օֆերտայում կամ պաշտոնական կայք-էջում ներկայացված Ծառայությունները և բաժանորդի կողմից ընտրված փաթեթին համապատասխան, որն հաստատվում է սույն համաձայնագրում բաժանորդի ստորագրությամբ:

3. Լրացուցիչ Ծառայությունը տրամադրվում է օպերատորի կողմից հրապարակային օֆերտայում և/կամ պաշտոնական կայք էջում հրապարակված լրացուցիչ Ծառայությունների բաժնում, որն հաստատվում է սույն համաձայնագրում բաժանորդի ստորագրությամբ:

4. Փաթեթը ու ներառվող հիմնական Ծառայությունները

Փաթեթի անվանում	Փաթեթում ընդգրկվող Ծառայությունները			Փաթեթի Արժեքը
	IP TV	Cat TV	Ինտերնետ	
<input type="checkbox"/> X 50				
<input type="checkbox"/> X 100				
<input type="checkbox"/> X 200				
<input type="checkbox"/> Pro 50				
<input type="checkbox"/> Pro 150				
<input type="checkbox"/> Pro 300				
<input type="checkbox"/> ProMax 100				
<input type="checkbox"/> ProMax 200				
<input type="checkbox"/> Exclusive				

5. **Լրացուցիչ ծառայությունները**, որը տրամադրվում է միանվագ կամ ամսական վճարով՝

Լրացուցիչ ծառայություն	Վճարման տարբերակ	Վճարման ենթակա գումար /ՀՀ դրամով/	Քանակ (հատ)
Ստատիկ կապուղի (Real IP)			

6. Համաձայնագիրը կնքվում է **12/տասներկու/ ամիս** ժամկետով: Համաձայնագիրը փոխադարձ համաձայնությամբ համարվում է երկարաձգված **12/տասներկու/ ամիս** ժամկետով, եթե Կողմերից մեկը սույն պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 15/տասնհինգ/ օր առաջ պաշտոնական էլ. փոստին ծանուցմամբ չի հրաժարվում դրանից: Բաժանորդի կողմից **13/տասներեք/-րդ ամսվա վճարումը** դիտարկվում է որպես պայմանագրի երկարաձգման համաձայնություն:

7. Համաձայնագրով հաստատված/սահմանված փաթեթի սպասարկման ենթակա վճարը բաժանորդը վճարում է օպերատորի կողմից նշված բանկային փոխանցման և/կամ վճարահաշվարկային համակրգերի միջոցով Օպերատորի հաշվեհամարին:

8. Բաժանորդը ծառայությունները ստանում է իր նախօրոք վճարված փաթեթին համապատասխան:

9. Բոլոր այն հարցերը որոնք չեն կարգավորվում սույն համաձայնագրով, կարգավորվում են «Ծառայությունների մատուցման տարեկան բաժանորդային պայմանագիր» հրապարակային օֆերտայով:

10. Բաժանորդի ID համար

--	--	--	--	--	--	--

11. Բաժանորդի կողմից Վճարման եղանակը՝

Telcell կամ **EasyPay** վճարային տերմինալներով կամ կամ դրամապանակներով փնտրել **NETX** ապրանքանիշը, մուտքագրել սույն կետով նշված ID համարը և վճարել գումարը

12. ԿՈՂՄԵՐԻ ՎՎՎԵՐԱՊԱՅՄԱԼՆԵՐ

ՕՊԵՐԱՏՈՐ
NETX ապրանքանիշը ներկայացնող ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ ՍՊԸ
ՀՎՀՀ 08262279
Հ/Հ ԱՄԵՐԻԿԱԲԱՆԿ ՓԲ 1570097335340200
Հասցե՝ Կարապետ Ուկնեցի 31/3
Հեռախոս (060) 80 77 77 Mail: info@netx.am Վեբ կայք՝ www.netx.am
Տնօրեն՝ Նաիրի Պողոսյան
(ստորագրություն/կնիք)

ԲԱԺԱՆՈՐԴ
Անձնագիր սերիա _____ Տրվել է __/__/____, _____ կողմից
Ծառայությունների մատուցման Հասցե _____
Հեռախոս +374 (__) _____
Հեռախոս +374 (__) _____
(ստորագրություն)

Սարքավորումները Բաժանորդին հանձնման-ընդունման
ԱԿՏ



բ. երևան
2024 / __ / __ /

NETX ապրանքանիշը ներկայացնող «ՖՈՐ ՅՈՒՆԻԹ» ՍՊԸ-ը՝ ի դեմս տնօրեն Նաիրի Պողոսյանի, գործելով ընկերության կանոնադրության համաձայն (այսուհետ Օպերատոր), մի կողմից և

այսուհետև՝ Բաժանորդ

մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդ), (համատեղ՝ Կողմեր)

Յիմք ընդունելով օպերատորի կողմից պաշտոնական կայքում հրապարակված օֆերտան կնքեցին սույն հանձնում-ընդունման ԱԿՏ-ը հետևյալի մասին.

1. Բաժանորդին տրամադրվող սարքերը հանդիսանում են կազմակերպության սեփականությունը և ենթակա են վերադարձման ծառայությունները կասեցման պարագայում

2. Սարքեր և արժեքները

Ծախսանյութեր / սարքավորումներ	Սերիան կամ Mac հասցե	Շուկայական արժեք /ՀՀ դրամ/	Քանակ հատ
Թվային օպտիկական սարք	Սերիական համար	24,900 ՀՀ դրամ	
IP TV box	Սերիական համար	30.900 ՀՀ դրամ	
կառավարման վահանակ		2,900 ՀՀ դրամ	
IP Տեսախցիկ	Սերիական համար	51,500 ՀՀ դրամ	

3. Սարքերը վնասելու պարագայում ենթակա են փոխհատուցման 2 կետով աղյուսակի արժեքներին համապատասխան

4. Բաժանորդի ID համար

--	--	--	--	--	--	--	--

Վճարման եղանակը՝ Telcell կամ EasyPay վճարային տերմինալներով կամ կամ դրամապանակներով փնտրել NETX ապրանքանիշը, մուտքագրել սույն կետով նշված ID համարը և վճարել գումարը

5. ԿՈՂՄԵՐԻ ՎՎԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ՕՊԵՐԱՏՈՐ NETX ապրանքանիշը ներկայացնող ՖՈՐ ՅՈՒՆԻԹ ՍՊԸ
ՀԿՀՀ 08262279
Հ/Հ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ 1570097335340200
Հասցե՝ Կարապետ Ուլնեցի 31/3
Հեռախոս (060) 80 77 77 Mail: info@netx.am Վեբ կայք՝ www.netx.am
Տնօրեն՝ Նաիրի Պողոսյան
(ստորագրություն/կնիք)

ԲԱԺԱՆՈՐԴ
Անձնագիր սերիա _____
Տրվել է ____/____/____, _____ կողմից
Ծառայության մատուցման հասցե _____

Հեռախոս +374 (____) _____
Հեռախոս +374 (____) _____
(ստորագրություն)